ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ

Քաղաքական կուսակցությունների մի քանի տիպեր անմիջականորեն պայմանավորված են կուսակցական համակարգերով: Կուսակցական համակարգը քաղաքական ինստիտուտ է, որը ոչ միայն բնութագրում է հասարակության քաղաքական կազմակերպումը, այլ նաև պետության և ընդհանուր քաղաքական համակարգի մյուս հաստատությունների հետ կուսակցությունների փոխհարաբերությունները: Այս քաղաքական ինստիտուտը իր մեջ ներառում է իրավական, քաղաքական, պատմական և ազգային նորմերի և ավանդույթների այն ամբողջությունը, որը ի հայտ գալով այս կամ այն երկրում, հնարավոր կամ անհնար է դարձնում քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Ամենատարածվածը ներկայումս բազմակուսակցական համակարգն է: Այսպիսի համակարգ ունեն այն երկրները, որտեղ կան քաղաքական ազատություններ և դեմոկրատական իրավունքներ, որոնք հնարավորություն են ստեղծում ազատ քաղաքական գործունեության համար: Այսպիսի երկրներում կազմավորվում և ազատորեն գործում են բազմաթիվ կուսակցություններ: Բազմակուսակցական կարող է համարվել այն համակարգը, որտեղ գործում են երկուսից ավելի կուսակցություններ: Սակայն բազմակուսակցական համակարգը չի իմաստավորվում միայն որոշակի թվով կուսակցությունների առկայությամբ: Բազմակուսակցական համակարգը հաստատված կարող է համարվել միայն այն դեպքում, երբ ընտրական պայքարին հանուն պետական իշխանության մասնակցում են երկուսից ավելի կուսակցություններ, որոնք բոլոր հնարավորություններն ունեն մասնակցելու բարձրագույն կամ տեղական օրենսդիր ու գործադիր իշխանությունների կազմավորմանը: Եթե այդ հնարավորությունները բացակայում են, ինչքան էլ մեծ լինի կուսակցությունների թիվը, տվյալ երկիրը չի կարող համարվել բազմակուսակցական համակարգ ունեցող երկիր: Տվյալ դեպքում

կուսակցություններն ու գործող մյուս հասարակական-քաղաքական կազմակերպությունները ծառայում են որպես արտաքին քող տոտալիտար վարչակարգը քողարկելու համար:

Բազմակուսակցական համակարգերը ունեն նաև իրենց տարատեսակները: Դրանցից կարելի է նշել երկուսը՝ բազմակուսակցական համակարգ մեկ առաջատար կուսակցությամբ և դաշնակցային ձևի բազմակուսակցական համակարգ: Առաջինի դեպքում բավականին երկարատև մի ժամանակաշրջանում կուսակցություններից մեկը, սովորաբար ամենամեծը, ամենաազդեցիկը և ժողովրդականություն վայելողը, առաջատար դիրքեր գրավելով երկրի ներքաղաքական կյանքում, կարողանում է անընդհատ հաղթանակներ տանել պառլամենտական ընտրություններում, որը նրան հնարավորություն է տալիս կազմել կամ միակուսակցական կառավարություններ, կամ էլ գլխավորել կոալիցիոն կառավարությունները՝ իհարկե իր ձեռքում պահելով կառավարության հանգուցային պորտֆելները: Երկրորդի դեպքում քաղաքական դաշտում միմյանց դեմ պայքարում են ոչ թե առանձին կուսակցություններ, այլ կուսակցությունների դաշինքներ: Իհարկե նման համակարգը չի բացառում նաև առանձին կուսակցության գործունեությունը, այլ ընդհակառակը, քաղաքական պայքարի պրակտիկ պատմությունը ցույց է տալիս, որ մեկ հզոր կուսակցության դեմ պայքարելու համար է, որ նրա հակառակորդ կուսակցությունները գնում են դաշինքի:

Կուսակցական համակարգերի հաջորդ տեսակը միակուսակցական համակարգերն են, որոնք ավելի սակավ են հանդիպում: Այսպիսի համակարգ ունեցող երկրներում հաստատված են ավտորիտար և տոտալիտար վարչակարգեր, որտեղ լեգալ գործում է միայն մեկ կուսակցություն, որին էլ վերապահված է կառավարություն կազմելու իրավունքը: Քաղաքական ազատություններ և դեմոկրատական իրավունքներ միակուսակցական համակարգերում կամ չկան, կամ էլ ձևական բնույթ են կրում: Կառավարող կամ ավելի ճիշտ պետական կուսակցությանն ընդդիմադիր կուսակցություն կամ այլ հասարակական կազմակերպություն ստեղծելու բոլոր փորձերը կասեցվում, դատապարտվում և խեղդվում են պետական իշխանությունների կողմից, որը որոշ երկրներում որակվում է որպես քրեական հանցագործության կամ պետական դավաճանություն: Կառավարող կուսակցության գերիշխանությունը մեծ մասամբ երաշխավորված է սահմանադրորեն: Միակուսակցական

համակարգ ունեցող պետությունների սահմանադրությունների մեջ մտցված են հատուկ հոդվածներ իշխող կուսակցության ղեկավար դերի մասին:

Միակուսակցական համակարգը էականորեն փոխում է նաև կուսակցության բնույթը: Այն աստիճանաբար կորցնում է քաղաքական կուսակցություններին բնորոշ հատկանիշները, սերտաճում է պետական իշխանության մարմինների հետ, կամ էլ վերածվում է գերպետության, որի համար սեփական պետությունը դառնում է միայն ադմինիստրատիվ գործիք կուսակցական հրահանգների կատարման համար: Կուսակցության զարգացումը փաստացիորեն կանգ է առնում, որովհետև այն հնարավոր չէ առանց հակառակորդ կուսակցության առկայության: Միակուսակցական համակարգերը ունեն նաև իրենց տարատեսակները, ինչպես որ բազմակուսակցական համակարգերը: Կարելի է տարբերել մաքուր միակուսակցական և կեղծ բազմակուսակցությամբ միակուսակցական համակարգեր: Առաջին դեպքում գործում է միայն կառավարող կուսակցությունը՝ սերտաճած պետական ապարատի հետ: Երկրորդ դեպքում կառավարող կուսակցության կողքին գործում են նաև այլ կուսակցություններ, որոնք ընդունում են նրա ղեկավար և ուղղություն տվող դերը: Այս կուսակցությունները հաճախ ստեղծվում են արհեստականորեն, ձևական բնույթ են կրում, չունեն քաղաքական ոչ մի ինքնուրույնություն և նպատակ ունեն դեմոկրատիայի պատրանք առաջ բերել միակուսակցական համակարգը քողարկելու համար: Կեղծ բազմակուսակցությունը հատկապես բնորոշ էր մինչ կոմունիստական վարչակարգերի տապալումը Արևելյան Եվրոպայի մի քանի սոցիալիստական պետություններին:

Ժամանակակից մի քանի երկրներ ունեն երկկուսակցական համակարգ: Այս համակարգի առանձնահատկությունն այն է, որ բազմաթիվ կուսակցությունների առկայության դեպքում իշխանության գլուխ անցնելու հնարավորություն ունեն միայն երկուսը, որոնք մերթ ընդ մերթ փոխարինում են միմյանց պետական կառավարման ղեկի մոտ: Երբ մեկը հաղթանակ տանելով ընտրություններում դառնում է կառավարող, մյուսը շատ սահուն և հանգիստ, առանց լուրջ քաղաքական վայրիվերումների հայտնվում է ընդդիմության դիրքերում: Երկկուսակցական համակարգը հանդիսանում է խոշոր դրամատերերի իշխանության պահպանման ամենից արդյունավետ և գործնական միջոցներից մեկը: Այս համակարգին բնորոշ են երկու խոշորագույն կուսակցությունների փոխկապակցված և փոխկախված գործունեությունը

պետական իշխանությունը պահելու համար: Որպես կանոն, այդ կուսակցությունները ունենում են պատմական մի որոշակի ժամանակաշրջանի համար մշտական և սկզբունքորեն ընդհանուր խնդիրներ, որոնց լուծման համար, սակայն առաջադրում են տարբեր միջոցներ, ելնելով այն սոցիալական խավերի շահերից, որոնց իրենք ներկայացնում են: Երկկուսակցությունը պահպանվում է շնորհիվ այն բանի, որ իշխող խավերը շահագրգռված են իրենց երկու քաղաքական կուսակցությունների հավասարակշիռ և հավասարազոր գոյությամբ: Սակայն այսպիսի քաղաքական կուրսը անխուսափելիորեն առաջ է բերում այն սոցիալական խմբերի դժգոհությունը, որոնց պահանջները իրենց լուծումը չեն գտնում: Այս պահին առաջ է գալիս նոր քաղաքական գործողությունների միտում, անկախ իշխող երկու կուսակցություններից: Չգտելով վերացնել այդ միտումները, երկկուսակցական համակարգի երկու հեգեմոն կուսակցություններից մեկն ու մեկը հանդես է գալիս բարեփոխումների գաղափարներով, այդ ձևով իր մեջ ներքաշելով հնարավոր երրորդ կուսակցության սոցիալական հենարանը: Սրանով երրորդ կուսակցության ստեղծման համար ծավալված շարժմանը հասցվում է մահացու հարված: Երբեմն էլ երրորդ կուսակցության ստեղծումը կանխելու համար բարեփոխումների ծրագրով հանդես են գալիս միաժամանակ երկու կուսակցություններն էլ: Նրանց նախընտրական պլատֆորմներում հայտնվում են այլընտրանքային փոփոխություններ, երրորդ ուժի սպառնալիքը ստիպում է ավելի շատ գործել փոխհամաձայնեցված: Սակայն երբ վտանգն անցնում է և երրորդ կուսակցության կամ առաջացման, կամ էլ պետական իշխանության մարմիններ ներթափանցելու հնարավորությունները չեզոքացվում են, երկու կուսակցությունները վերադառնում են իրենց ելման դիրքերը, շարունակելով իրենց սովորական քաղաքական պայքարը, բայց այս անգամ արդեն աշխատելով նոր հիմքերի վրա դնել միջկուսակցական փոխհավասարությունն ու փոխհավասարակշռությունը: Երկկուսակցական համակարգը պատմության ընթացքում բազմիցս ցույց է տվել իր մեծ հնարավորությունները, որոնք բավականին բարձր են գնահատվում իշխող խավերի կողմից: Մի կողմից այն ապահովում է բազմակարծությունը, չի ոչնչացնում քաղաքական ազատություններն ու դեմոկրատական իրավունքները և քաղաքացիներին ընտրության հնարավորություն է ընձեռում, մյուս կողմից այն պահպանում է գոյություն ունեցող հասարակական-տնտեսական կարգը աղետաբեր ցնցումներից

բավարարելով նաև ընտրողների պահանջները առաջընթաց փոփոխությունների նկատմամբ: Սրանով է պայմանավորված երկկուսակցական համակարգերի երկարակեցությունը այն երկրներում, որտեղ այս յուրահատուկ քաղաքական ինստիտուտը իր հաստատումն է գտել:

Երկկուսակցական համակարգն ամենահին կուսակցական համակարգն է, եթե նկատի ունենանք միայն դասական կուսակցությունների գոյության ժամանակաշրջանը: Այն հաստատվել է Անգլիայում, դեռևս 17-րդ դարի վերջերին, երբ տորիների ու վիգերի կուսակցությունները սկսեցին տնօրինել երկրի ներքաղաքական կյանքը: Այնուհետև երկկուսակցական համակարգը ընդօրինակեցին Ամերիկայի Միացյալ Նահանգները և էլի մի քանի պետություններ, որոնք ժամանակին եղել էին բրիտանական գաղութներ: Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի կուսակցական համակարգերը հանդիսանում են երկկուսակցության դասական օրինակներ, որոնք ունեն շուրջ 200 տարվա պատմություն:

Ժամանակակից մի շարք երկրներ ունեն այնպիսի կուսակցական համակարգեր, որոնք հնարավոր չէ դասել ոչ բազմակուսակցական, ոչ միակուսակցական ու ոչ էլ երկկուսակցական համակարգերի շարքին: Այդպիսիներից են **օրենքով կուսակցությունների ֆիքսված թիվ** ունեցող համակարգերը: Պայմանականորեն մենք դրանք կարող ենք անվանել նաև **արհեստական կուսակցական համակարգեր**: Այսպիսի համակարգ ունեցող պետություններում օրենքով թույլատրված է որոշակի թվով կուսակցությունների գործունեությունը, որոնցից բացի այլ կուսակցությունների հիմնումը կամ գործունեությունը խստիվ արգելվում է: Սովորաբար թույլատրված կուսակցությունների թիվը լինում է երկուսը կամ երեքը, այսինքն արհեստականորեն ստեղծվում են երկկուսակցական կամ եռակուսակցական համակարգեր: Դրանք հանդիսանում են նորմալ բազմակուսակցական համակարգերի փոխարինողները, կրում են ժամանակավոր, անցումային բնույթ և երբեք էլ երկար ժամանակով գոյություն ունենալ չեն կարող: Արհեստական կուսակցական համակարգերի ստեղծումը նպատակ ունի կանխել կամ կասեցնել իշխող վարչակարգի համար ոչ ցանկալի կուսակցությունների առաջացումն ու գործունեությունը: Արհեստական երկկուսակցական համակարգը համեմատաբար երկար գոյատևել է Բրազիլիայում (1966-1979թթ.):

Կուսակցական համակարգերի բնութագրումը այժմ մեզ կարող է հնարավորություն տալ առանձնացնել դրանցով պայմանավորված քաղաքական

կուսակցությունների մի քանի տիպեր: Բազմակուսակցական և երկկուսակցական համակարգերում գործող կուսակցությունները կարող ենք որակել որպես մրցակցային: Տերմինը նախանշում է քաղաքական ազատությունների և պլուրալիզմի առկայությունը, որն հնարավորություն է ստեղծում բոլոր կուսակցություններին մտնել ազատ մրցակցության մեջ քաղաքական իշխանության համար: Մեկ առաջատար կուսակցությամբ բազմակուսակցական համակարգի առաջատար կուսակցությունը կարող ենք տիպավորել որպես գերիշխող (դոմինանտ): Սխալ չէ նաև ավանգարդային անվանումը: Երկուսն էլ ցույց են տալիս մյուս կուսակցությունների նկատմամբ նրա առաջնայնությունն ու հզորությունը:

Դոմինանտ կուսակցությունների կարգավիճակում էր գտնվում հետպատերազմյան տարիներին Իտալիայի Քրիստոնեա Դեմոկրատական կուսակցությունը և Ճապոնիայի Լիբերալ Դեմոկրատական կուսակցությունը: Վերջինս մոտ երեսուն տարի շարունակ հաղթում էր պառլամենտական ընտրություններում հետևում թողնելով երկրի մյուս կուսակցություններին (Սոցիալիստական կուսակցություն, Կոմեյտո, Դեմոկրատական սոցիալիզմի կուսակցություն, Սոցիալ-դեմոկրատների միություն և այլն):

Եթե բազմակուսակցական համակարգում երկու կամ երեք կուսակցություն իրենց ազդեցությամբ և հնարավորություններով շատ անգամ գերազանցում են մյուսներին, ապա ընդունված է նրանց բաժանել երկու խմբի.

- լիդեր-կուսակցություններ, աուտսայդեր-կուսակցություններ

Այդպիսին են կուսակցությունները հատկապես Ֆրանսիայում: Այստեղ առանձնանում են.

- երեք խոշոր կուսակցություններ, որոնք պառլամենտական ընտրություններում հավաքում են ընտրողների ձայների 20%-ից ավելին և ունեն համապատասխան կարողություններ ու հնարավորություններ կազմելու կառավարություններ: Դրանք են՝ ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունը, Հանրապետությանն աջակցող միավորում (ՀԱՄ) կուսակցությունը և Միություն հանուն ֆրանսիական դեմոկրատիայի միջկուսակցական ֆեդերացիան,

- երեք փոքր ընդդիմադիր կուսակցություններ, որոնք հավաքում են ընտրողների ձայների 10-15%-ը: Դրանք են՝ Կոմունիստական կուսակցությունը, Ազգային ճակատը և կանաչները: Առաջին երեքը հանդիսանում են լիդեր-

կուսակցություններ, իսկ երկրորդ խմբի փոքր կուսակցությունները առաստայդեր- կուսակցություններ:

Միակուսակցական համակարգի իշխող կուսակցությունները մտնում են մոնոպոլ (մենատեր) կամ պետական կոչվող տիպի մեջ: Առաջին բնորոշումը նշանակում է, որ քաղաքական համակարգում տվյալ կուսակցությունը իրականացնում է բարձրագույն իշխանությունը և իր գործունեությամբ բացառում է ցանկացած այլ կուսակցության գոյությունը: Երկրորդ տերմինը ցույց է տալիս կուսակցության և պետության սերտաճման և ծուլման գործընթացը: Չնայած, որ պետական իշխանության ձգտում են բոլոր կուսակցությունները, սակայն այս տիպը վերահսկողության տակ վերցնելով հասարակության բոլոր բնագավառները (տնտեսություն, իրավունք, հոգևոր կյանք) կուսակցական ղեկավար մարմիններին տալիս է պետական կառավարման ֆունկցիաներ: Կուսակցության գաղափարախոսությունը դառնում է պետական գաղափարախոսություն, իսկ կուսակցական էլիտան ձևավորում է պետական ադմինիստրացիան և պետական կառավարման ողջ համակարգը: Պետական-մոնոպոլ կուսակցություններին բնորոշ է կոշտ կենտրոնացվածությունը, անդամության կանոնակարգումը, խիստ կարգապահությունը, ֆրակցիաների և ներկուսակցական բանավեճերի ու քննարկումների բացակայությունը: Քանի որ նման կուսակցությունները դառնում են ավտորիտար և տոտալիտար ռեժիմների հիմքը, նրանց երբեմն անվանում են նաև *ավտորիտար* կուսակցություններ[1]: Հաշվի առնելով այն, որ միակուսակցական համակարգի իշխող կուսակցությունը ձգտում է փոխել ողջ բնակչության գիտակցությունն ու մտածելակերպը իր գաղափարական դոկտրինաներին համապատասխան և միևնույն ժամանակ շեշտը դնում քարոզչության ու հակաքարոզչության վրա, այն որակվում է նաև որպես հավաքագրական (մոբիլիզացիոն) կուսակցություն:

Կիրառելով վեբերյան տերմինաբանությունը, երկկուսակցական համակարգի իշխող երկու կուսակցություններին ուսումնասիրողներից ոմանք անվանում են պատրոնաժային (խնամակալական-հովանավորչական): Այստեղ նկատի է առնվում այն հանգամանքը, որ երկկուսակցությունը հնարավորություն է տալիս կառավարող կուսակցություններին իրենց գործունեությունը ուղղորդել քաղաքական իշխանության կողմից լիդերին, նրա շտաբին ու կողմնակիցներին

---

[1] Չպետք է շփոթել այն ավտորիտար կուսակցությունների հետ, որոնք այդպես են անվանում ներկուսակցական ղեկավարման ավտորիտար ոճի համար:

տրվող առավելությունների օգտագործմանը, որպեսզի առավելագույնս արդյունավետ իրականացվի խնամակալությունը պետական պաշտոնների նկատմամբ:

Երկկուսակցական համակարգի ծնունդ են նաև այսպես կոչված «երրորդ» կուսակցությունները: Տերմինը արդեն հուշում է, որ այս տիպի մեջ մտնում են երկու կառավարողներից բացի մյուս կուսակցությունները, որոնք ջանում են մնալ քաղաքական դաշտում և ճեղքել «պաշարման օղակը» դեպի իշխանություն տանող ճանապարհին: «Երրորդ» կուսակցությունները բնորոշ են ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ Մեծ Բրիտանիայի երկկուսակցական համակարգերին: ԱՄՆ-ում դրանք կարելի է բաժանել չորս հիմնական խմբի, որոնք են՝ ա) գաղափարական կուսակցություններ, բ)մեկ խնդրի կուսակցություններ, գ) տնտեսական բողոքի կուսակցություններ և դ) խմբակցային կուսակցություններ: Փոքր կուսակցությունները շատ կարճատև կյանք են ունենում և երբեմն կազմավորվում և կազմալուծվում են ընդամենը մեկ կամ երկու պրեզիդենտական ընտրություններին մասնակցելուց հետո: Համեմատաբար երկար են գոյատևել գաղափարական կուսակցությունները, որոնք մեծամասամբ դուրս են եղել ամերիկյան քաղաքական կյանքի հոսանքից և միայն գաղափարակիցների կազմակերպություններ են: Նրանք չեն ունեցել կայուն սոցիալական հենարան և չնայած իրենց որոշակի երկարակեցությանը, չեն կարողացել մասնակցել պրեզիդենտական ընտրություններին: Այդպիսի կուսակցություններից էին օրինակ, Սոցիալիստական բանվորական կուսակցությունը և Աշխատավորների սոցիալիստական կուսակցությունը: Իսկ այն, որ փոքր կուսակցությունները ամերիկյան քաղաքական կյանքի բնորոշ գիծն են եղել և մնում, ապացուցում է նաև պատմությունը: 1920թ. պրեզիդենտական ընտրություններին մասնակցում էր ֆերմերաբանվորական կուսակցությունը (թեկնածու՝ Պ. Կրիստենսեն), 1924թ.՝ Առաջադիմական կուսակցությունը (թեկնածու՝ Ռ. Լաֆոլլետ), 1936թ.՝ Միութենական կուսակցությունը (թեկնածու՝ Ու. Լեմկե), 1948թ.՝ Նահանգների իրավունքի (թեկնածու՝ Ս. Թերմոնդ) և Առաջադիմական կուսակցությունները (թեկնածու՝ Գ. Ուոլլես), 1952թ. Առաջադիմական կուսակցությունը (թեկնածու՝ Վ. Հալինան), իսկ 1968 և 1972թթ.՝ Ամերիկյան անկախ կուսակցությունը[1]:

---

[1] Политические партии США в новейшее время. М., 1982, с.271.

Ըստ էության, մեկ խնդրի երրորդ կուսակցություն կարելի է համարել նաև այն քաղաքական խմբավորումներին, որոնք մերթ ընդ մերթ ասպարեզ իջնելով պաշտպանում են ընտրություններին մասնակցող այսպես կոչված անկախ թեկնածուներին: Վերջին երկու տասնամյակների ընթացքում այդպիսի անկախ թեկնածուներ ավելի հաճախ են երևում ԱՄՆ-ի պրեզիդենտական ընտրությունների ժամանակ: 1976թ. ընտրություններին մասնակցում էր անկախ թեկնածու Յու. Մակկարտին, 1980թ.՝ Ջ. Անդերսոնը, իսկ 1992թ.՝ Ռոս Փերոն: Սակայն այնքան ամուր է երկկուսակցական համակարգը և այնքան կոշտ են քաղաքական պայքարի ամերիկյան կանոնները, որ երրորդ կուսակցություններից և ոչ մեկին այդպես էլ չի հաջողվել որևէ արդյունքի հասնել: Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, 1920թ.-ից այս կողմ տեղի ունեցած պրեզիդենտական ընտրությունների մեծ մասում երրորդ թեկնածուները հիմնականում ոչ մի ընտրիչ չեն ունեցել պրեզիդենտին ընտրող ընտրիչների կոլեգիայում: Թերևս բացառություն կարելի է համարել 1924, 1948 և 1968թթ. ընտրությունները, որոնց ժամանակ երրորդ թեկնածուներին պաշտպանող համապատասխանաբար 13, 39 և 46 ընտրիչներ էին հայտնվել ընտրիչների կոլեգիայում (թեկնածուն կարող է հաղթել, եթե նրա օգտին քվեարկեն 270-ից ոչ պակաս ընտրիչներ)[2]:

Փոքր կուսակցության թուլության պատճառներից մեկն էլ այն է, որ կառավարող երկու կուսակցությունների կողմից նախընտրական ժողովների ազգային համագումարների՝ գումարումը ազատ քաղաքական մթնոլորտում, հնարավորություն է տալիս այլախոհներին ոչ թե դուրս գալ և միանալ փոքր կուսակցություններին, այլ մնալ կուսակցության շարքերում և ազդեցություն ունենալ թեկնածուների ընտրության և քաղաքականության վրա: Օրինակ, հակապատերազմական շարժումը մեծ ազդեցություն թողեց 1968 և 1972թթ. Դեմոկրատական կուսակցության ազգային համագումարների վրա: 80-ական թթ. ԱՄՆ-ում բավականին բարձրացել էր սևամորթների քաղաքական ակտիվությունը, ստեղծվել էին բարենպաստ պայմաններ նեգրերի շահերը պաշտպանող համազգային, նոր քաղաքական կուսակցության կազմավորման համար: Սակայն դա տեղի չունեցավ, որովհետև Դեմոկրատական կուսակցության ներսում ոչ ոք չխոչընդոտեց սևամորթների պաշտպանությամբ հանդես եկող խմբավորումների ծավալած գործունեությանը, որոնք մեծ դեր

---

[2] Политические партии США в новейшее время, с. 271.

ունեին 1984 և 1988թթ. ազգային համագումարներում (1988թ. Դեմոկրատական կուսակցության կողմից պրեզիդենտի թեկնածու առաջադրվելու համար համառ պայքար էր ծավալել Ջեսի Ջեքսոնը, որն ԱՄՆ-ի պատմության մեջ առաջին նեգր քաղաքական գործիչն էր, որ քիչ մնաց հաղթեր նախնական ընտրությունների ժամանակ): Այնուամենայնիվ խմբակցային տարանջատման վտանգը սպառնում է երկու կուսակցություններին էլ և այն ջանքերը, որ նրանք գործադրում են նման բաժանումից խուսափելու համար, հենց համարվում է այն մեծագույն ազդեցությունը, որ ունեն երրորդ ուղղության կուսակցություններն ու քաղաքական ուժերը ԱՄՆ-ի ներքաղաքական կյանքի վրա:

Մեծ Բրիտանիայի երկկուսակցական համակարգը համեմատած ԱՄՆ-ի երկկուսակցական համակարգի հետ ավելի մեղմ է, որովհետև բրիտանական ընտրական օրենքները հնարավորություն են ընձեռում «երրորդ» կուսակցություններին ոչ միայն ազատորեն գործել, այլև իրենց ներկայա-ցուցչությունն ունենալ պառլամենտում: Այս առումով համեմատաբար ավելի մեծ է նաև նրանց քաղաքական կշիռը: Փոքր կուսակցությունների մեջ ամենաազդեցիկը Լիբերալ կուսակցությունն է՝ վիգերի հայտնի կուսակցության ժառանգորդը, որը նաև երկկուսակցական համակարգի կառավարող կուսակ-ցություններից մեկն էր մինչ 20-ական թթ.: Լիբերալները ունեն իրենց պառլամենտական ֆրակցիան: Նրանց վերահսկողության տակ է հանրահայտ «Գարդիան» թերթը: Տեսականորեն նրանք պահպանում են նաև կոալիցիոն կառավարության մեջ մտնելու շանսերը:

Ավարտելով մեր խոսքը կուսակցական համակարգերով պայմանավորված կուսակցությունների տիպերի մասին, նշենք որ յուրաքանչյուր երկրի կուսակցական համակարգ ունի իր յուրահատկությունները, որն անմիջական ազդեցություն է թողնում կուսակցությունների գործելակերպի, քաղաքական կուրսի, սոցիալական բնույթի և կազմակերպական կառուցվածքների վրա: Այդ պատճառով կուսակցական համակարգերի հետ կապված կուսակցությունների տիպերը կարող են ունենալ առանձնահատուկ դրսևորումներ, բնորոշ միայն տվյալ երկրի համար: